# «ԷՆ ՓԻ ՍԻ» ՍՊԸ
ООО "ЭН ПИ СИ"
"NPC" LTD

ՀՀ, Երևան, Պուշկինի 25, հեռ. 53 27 72, ֆաքս. 53 91 48, www.npc.am, e-mail: adm@npc.am

N 16*

«22» 02 2010

Հաստատում եմ

Կ. Գասպարյան

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N16*

Պատվիրատու «Վանդա Սա» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության է հանձնվել հետևյալ նյութերը՝ փորձաքննության օբյեկտների տեխնիկական տեղեկություններ:

Փորձաքննությունը տվել է հետևյալ արդյունքները.

## *Փորձագիտական եզրակացություն*

Փորձաքննությունը իրականացվել է փաստաթղթային եղանակով:

Փորձաքննության է հանձնվել Էքսել ՄՍ /Exel MS/,Էքսել ՀՏԴ /Exel HTD/,Էքսել ԼՊ /Exel LP/, Գեոնիտ 750 (Ֆորտել Պլյուս 75) /Geonit 750 (Fortel Plus 75)/, Գեոնիտ 300 (Ֆորտել Պլյուս 50) /Geonit 300 (Fortel Plus 50)/, ՈՒՆՍ-ՊԱ, ՈՒՆՍ-Ս, ՈՒՆՍ-Ճ, էլեկտրադետոնատոր, պիրոտեխնիկական ռելե ՌՊ-92-0, ամոնիտ 6 ԺՎ Դ-32 փամփուշտ, ամոնիտ 6 ԺՎ փոշիվացված ապրանքատեսակների տեխնիկական տեղեկություններ:

ՀՀ կառավարության N 1308-Ն 12.11.2009թ. «Հայաստանի Հանրապետության Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության

արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» որոշման հավելված 1-ի ռազմական ցուցակում նմանատիպ սարքավորումները բնութագրվում են ՌՆ 4-րդ կետի a ենթակետում.

« ՌՆ 4 *Ռումբեր, տորպեդոներ, հրթիռներ, հեռահար հրթիռներ, այլ պայթուցիչ* ***սարքեր և լիցքեր և հարակից սարքավորումներ և հավելյալ հարմարանքներ, ինչպես նշված է ստորև, և նրանց համար հատուկ նախագծված բաղադրամասեր.***

***a.*** *Ռումբեր, տորպեդոներ, նռնակներ, ծխահարող տուփեր, տարողություններ (նռնակներ), հրթիռներ, ականներ, ղեկավարվող հրթիռներ, խորքային լիցքեր,* ***կառուցաքանդման լիցքեր, կառուցաքանդման սարքեր, կառուցաքանդման ամբողջական լրակազմեր, «պիրոտեխնիկական» սարքեր, փամփուշտներ և*** *սիմուլյատորներ (այսինքն, սարքավորում, որը նմանակում է վերոհիշյալ ապրանքներից որևէ մեկի հատկանիշները), որոնք հատուկ նախատեսված են ռազմական օգտագործման համար* » :

Համաձայն ՀՀ կառավարության N 1308-Ն 12.11.2009թ. որոշման՝ ապրանքը ռազմական նշանակություն ունի այն դեպքում, երբ դրա տեխնիկական տվյալները համապատասխանում են ցանկի, ռազմական ցուցակում նշված տվյալներին, տվյալ դեպքում վերնշված սարքավորումները իրենց տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում է ՌՆ 4-րդ կետի a ենթակետի նկարագրին:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Էքսել ՄՍ /Exel MS/,Էքսել ՀՏԴ /Exel HTD/,Էքսել ԼՊ /Exel LP/, Գեոնիտ 750 (Ֆորտել Պլյուս 75) /Geonit 750 (Fortel Plus 75)/, Գեոնիտ 300 (Ֆորտել Պլյուս 50) /Geonit 300 (Fortel Plus 50)/, ՈՒՆՍ-ՊԱ, ՈՒՆՍ-Ս, ՈՒՆՍ-Շ, էլեկտրադետոնատոր, պիրոտեխնիկական ռելե ՌՊ-92-0, ամոնիտ 6 ԺՎ Գ-32 փամփուշտ, ամոնիտ 6 ԺՎ փոշիվացված ապրանքատեսակները ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՉԵՆ:

« Էն Փի Սի » ՍՊԸ փորձագետ Ա.Զաքարյան

Վկայագիր N AST-001.Q-0032-2009